

345
Հ-11

787

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵ՛Ք

ԳԻՐԲ № 24

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ
ՃԱՆՍՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱ-
ՊԱՐՀԱԿԻ ՈՐԵՆՔԸ**

ՅԵՎ

ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԵԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ ԿՈՄԻՏԵՑԻ

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.

01 MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՐՈՎ ԶԵՂՆՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ

245
Հ-11 Տ

ԳԻՐԲ № 24

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱ-
ՊԱՐՀԱԿԻ ՈՐԵՆՔԸ**

ՅԵԿ

ՄԱՏՉԵԼԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

03
14630

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԵԿՈՆ ԳՈՐԾԱԳՐԻ ԿՈՄԻՏԵ

ՅԵՐԵՎԱՆ



09 SEP 2013

ՀԱՅ ՊՈԼԻԳՐԱՖԻ Ի ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 3070
ԳՐԱՌԵՊՎԱՐ № 782-դ.
ՏԻՐԱԺ 1200

ՎՈՐՈՇՈՒՄ ԱՍՖԽՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ ՅԵՎ ԺՈՂՈՎ-
ՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՇ-
ԽԱՏԱՊԱՐՀԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՍՖԽՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ
և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԸ ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. Հաստատել գյուղական բնակչության
ճանապարհային աշխատապարհակի վերաբերյալ
ստորև բերվող կանոնադրույթները:

2. Այս վորոշումը կիրարկության գնել 1927
թ. հոկտեմբերի 1-ից:

3. Այս վորոշման կիրարկումը համարել
իր ուժը կորցրած ԱՍՖԽՅ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐ-
ԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ և ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵ-
ՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1926 թ. փետրվարի 15-ի՝ գյուղա-
կան բնակչության ճանապարհային աշխատա-
պարհակի վերաբերյալ վորոշումը (Որ. Ժող.
1926 թ., № 2, հոդ. 593):

4. Առաջարկել ԱՍՖԽՀ կազմի մեջ մտնող հանրապետութիւնների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին և Ժողովրդական Կոմիտարների Խորհուրդներին իրենց որենադրութեան մեջ մտցնել այս փորձումից բղխող փոփոխութիւնները:

ԱՍՖԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նախագահ՝

Ս. ԱՂԱՄԱԼԻ-ՈՂԼԻ

ԱՍՖԽՀ Ժողովրդական Կոմիտարների Խորհրդի նախագահ՝

ԱՍՖԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի քարտուղար՝

Ա. ՇԱՀՎԵՐԳՅԱՆ

1927 թ. սեպտ. 5

Թիֆլիս—պալատ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐՀԱԿԻ

1. Հանրապետութեան սահմաններում համապատասխան շրջանների գլուղական ազգաբնակչութիւնը չենթարկել ճանապարհային աշխատապարհակի հանրապետական նշանակութիւն ունեցող խճուղիներ ու սալի ճանապարհներ կառուցելու, չեղածները վերանորոգելու և կանոնափոր վիճակում պահելու և աշխատանքներ

կատարելու համար, ինչպես նաև մասնակցելու բնութիւն տարբերային ազեաներից վնասված համամիութենական նշանակութիւն ունեցող խճուղիներին ու սալի ճանապարհների վերանորոգութեան աշխատանքներին այն դեպքերում, չերբ շարժման ընդհատում առաջ գալու վտանգ է սպառնում:

Ճանապարհային աշխատապարհակը կատարվում է հետևյալ հոդվածներով նախատեսված պայմաններով.

ԾԱՆՈԹ. 1.—Հանրապետական և տեղական նշանակութիւն ունեցող ճանապարհների վերաբերմամբ բնակչութեանը ճանապարհային աշխատապարհակի չենթարկելու փորձումները պետք է հրատարակվեն համապատասխան գաղափարական գործադիր կոմիտեի պլենումի կամ գաղափարային գործկոմների կողմից:

ԾԱՆՈԹ. 2.—Առանձին դեպքերում, չերբ համամիութենական ճանապարհների այս կամ այն մասը տնտեսական կարեւոր նշանակութիւն ունի տեղական բնակչութեան համար, այդպիսի փորձումներ կարող են ընդունվել նաև համամիութենական ճանապարհների վերաբերմամբ, սակայն, վերջին դեպքում, գաղափարական գործադիր կոմիտեի վորտումները պետք է հաստատվեն համապատասխան հանրապետութեան Կենտրոնական Գործադիր կոմիտեի կողմից:

2. Ճանապարհային աշխատապարհակը, բացի անձնական աշխատանքից, իր մեջ պարունակում է նաև պարտականութիւն այդ պարհակը կատարելիս ճանապարհային համապատաս-

խան մարմինների տրամադրութեան տակ գնելու անասուններ՝ սալերով փոխադրութեան անհրաժեշտ միջոցների ու պարագաների հետ միասին:

ԾԱՆՈՒԹ.— Անասունների և սալերով փոխադրութեան անհրաժեշտ միջոցների ու պարագաների քանակը վորոշվում է այս կանոնադրութեան 15 հոդվածով նախատեսված հրահանգով:

3. Ճանապարհային աշխատապարհակի չենթարկվում են գյուղական վայրերում ապրող բոլոր 18—50 տարեկան հասակի արական սեռի անձինք, բացառութեամբ նրանց, վորոնք մատնանշված են այս կանոնադրութեան 4-րդ հոդվածում:

4. Ճանապարհային աշխատապարհակի չենթակա չեն ա) հիվանդութեան կամ խեղանդամութեան հետևանքով իրենց աշխատունակութունն ընդմիջող կամ ժամանակավորապես կորցրած անձինք, բ) կարմիր Բանակի և կարմիր Նավատորմի մշտական ու փոփոխական մասերում իսկական զինվորական ծառայութեան մեջ գտնվող անձինք, գ) պետական, հասարակական և կոոպերատիվ հիմնարկութունների ու ձեռնարկութունների մշտական ծառայողները, դ) պետական, կոոպերատիվ և մասնավոր ձեռնարկութունների բանվորները, ինչպես նաև տրվյալ վայրում սեփական անտեսութուն չունեցող բարակները և ե) այն անձինք, վորոնք համապատասխան գավառակային գործադիր կոմիտեների վորոշումների հիման վրա այլ հար-

դելի պատճառներով ազատված են այդ պարհակից:

5. Ճանապարհային աշխատապարհակի չենթակա անձանց իրավունք է վերադասվում տրվյալ վայրում բավականաչափ վարձու բանվորական ուժ լինելու դեպքում, վորը վորոշում է գավառակային գործադիր կոմիտեն, իրենց անձնական աշխատանքը և այս կանոնադրութեան 2-րդ հոդ. հիշված բնական պարհակը փոխարինել զբամական տուրքով:

ԾԱՆՈՒԹ.— Ճանապարհային աշխատապարհակը զբամականով փոխարինելու նորմաները վորոշում են գավառակային գործադիր կոմիտեները, նկատի ունենալով ավելի վայրում բանվորական ուժ և լծկան անասուններ վարձելու գները՝ նորմաները հաստատվում են գավառական գործադիր կոմիտեների, իսկ ինքնավար մարզերում—նրանց կենտրոնական գործադիր կոմիտեների վորոշումներով:

6. Ճանապարհային աշխատապարհակի չենթակա յուրաքանչյուր անձ տարվա ընթացքում չի կարող ավելի աշխատել, քան լոթ բանվորական որ՝ ըստ աշխատաչափերի կանոնադրութեան (уточн. полож.) նորմաների:

7. Չի թույլատրվում ճանապարհային աշխատապարհակի չենթարկել աշխատանքների կատարման վայրից 8 կիլոմետր ավելի հեռու ապրող բնակչութեանը, բացառիկ դեպքում՝ գավառական գործադիր կոմիտեների վորոշումներով այդ տարածութունը կարող է ավելացվել

մինչև 15 կիրոնեարի աչն պարսնոսով, վորպեսպի աշխատանքների վաչրում բանվորներին դիշերեյու տեղ հատկացվի:

8. Չի թուլատրվում ազգաբնակիցները ճանապարհային աշխատապարհարկի չենթարկել գյուղատնտեսական չեռուն աշխատանքների շրջանում:

9. Աշխատապարհակն իրագործվում է գործաքանակի (сдельщина) սկզբունքով, այսինքն՝ յուրաքանչյուր շրջանի բնակչութիւն վրա գրքվում է ճանապարհային աշխատանքների վորոշ քանակութիւն, հաշված աշխատաչափերի կանոնադրութիւն նորմաներով և ուղեմասերը կրքվում են առանձին բնակելի վաչրերին:

10. Ճանապարհային աշխատապարհակի կարգով կատարվելիք աշխատանքների պլանները և ճանապարհային շինարարութիւն համապատասխան նախահաշվային չենթադրութիւնները մշակում են՝ հանրապետական նշանակութիւն ունեցող ճանապարհների նկատմամբ — տեղական տրանսպորտի համապատասխան հանրապետական վարչութիւնները, իսկ տեղական նշանակութիւն ունեցող ճանապարհների նկատմամբ՝ գավառական գործադիր կոմիտեները (ինքնավար մարզերում — նրանց կենտրոնական գործադիր կոմիտեները), վորից հետո հաստատվում են սահմանված կարգով:

11. Ճանապարհային պարհակի կարգով կատարվելիք աշխատանքները հաստատված տարե-

կան պլանների հիման վրա կազմակերպում, մասնավորապես ուղեմասերը վորոշ բնակելի կետերին կցում, ինչպես նաև պարհակի չենթակա անձանց քանակը և բանվորական աշխատաչափերն ու աշխատանքի կատարման ժամանակը վորոշում են հանրապետական ճանապարհների նկատմամբ — տեղական տրանսպորտի հանրապետական վարչութիւնները, համապատասխան գավառական գործադիր կոմիտեի համաձայնութիւն, իսկ տեղական նշանակութիւն ունեցող ճանապարհների նկատմամբ — գավառական գործադիր կոմիտեները:

Առանձին անձանց ճանապարհաշինարարական աշխատանքի ուղարկելու կարգադրութիւնն անում և նրանց աշխատանքի հերթը վորոշում է համապատասխան գավառակային գործկոմը:

12. Յեթե ճանապարհային աշխատապարհակի չենթարկված անձը վորոշված ժամանակին և վորոշված վաչրը չներկայանա աշխատելու, աչգ դեպքում չաշխատած օրերի համար սահմանվում է դրամական տուգանք՝ համաձայն այս կանոնադրութիւն 5-րդ հոդ. ծանոթութիւն մեջ մասնանշված նորմալի. տուրքը գանձվում է հարկերի գանձման համար սահմանված բնդհանուր կարգով:

Ճանապարհային աշխատապարհակից հրաժարվելու համար բացի վերոհիշյալ դրամական տուգանքից սահմանվում է նաև պատասխանատվութիւն ԱՍՖԽՂ կազմի մեջ մանող հանրա-

պետութիւնները քրեական որեւորքերի համապատասխան հոգւածներով:

13. Այս կանոնադրութեան 2-րդ հոգւածում հիշված անձնական աշխատանքի և բնական պարհակի փոխարեն սահմանվող գրամական տուրքը, վոր նախատեսված և այս կանոնադրութեան 5-րդ հոգւածով, գանձվում և բյուջե-տային տարվա ընթացքում, դավառակային գործադիր կոմիտեաների կողմից սահմանվող ժամ կեսներում, շարկերի գանձման ընդհանուր կարգով:

14. Այս կանոնադրութեան 12 և 13 հոգւածները կարգով ստացվող գումարները հատկացվում են ճանապարհային շինարարութեան համապատասխան վարկերին 15-րդ հոգւ. նախատեսված հրահանգում ցույց արված կարգով:

15 Հանձնարարել Հաղորդակցութեան ճանապարհների ժողովրդական կոմիտարիատի ԱՍՖԽՀ ժողովրդական կոմիտարիների Խորհրդին ստընթեր իրագործին մի ամսվա ընթացքում հրատարակել այս կանոնադրութեանը կիրարկելու ընդհանուր հրահանգը, համաձայնեցնելով ԱՍՖԽՀ Աշխատանքի և Ֆինանսների կոմիտարիատների հետ:

Գալատական գործադիր կոմիտեաներին իրամ փունք վերապահել մասնանշված ընդհանուր հրահանգի հիմունքներով և տեղական տրանսպորտի համապատասխան վարչութեան հետ համաձայնութեան դաշով, հրատարակել տեղական կանոններ այս կանոնադրութեան 4-րդ հոգւ. «ե» կետը, 5, 8 և 11-րդ հոգւածները կիրարկելու մասին:

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Հ. Ս. Խ. Հ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՍԻՏԵՅԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ

ԱՍՖԽՀ ԿԵՆՏՐՈՐԾԿՈՄԻ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ
ԿՈՂՄԻՑ 1927 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 5-ԻՆ ՀԱՍ-
ՏԱՏՎԱԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՃԱՆԱ-
ՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐՀԱԿԻ ԿԱՆՈՆԱԳՐՈՒ-
ԹՅՈՒՆԸ («Խորհրդ. Հայաստան» — 1927 Թ. սեպ-
տեմբերի 23, № 267) ԿԻՐԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1928 Թ. ապրիլի 25-ին

1. Խճուղիներ ու սալի ճանապարհներ և ճանապարհային կառուցվածքներ շինելու, նորոգելու և բարեկարգ վիճակում պահելու աշխատանքների տարեկան պլանն իրագործելու համար բնակչութեանը ճանապարհային աշխատապարհակի չենթարկելու անհրաժեշտութեանը վորոշում են՝ հանրապետական նշանակութեան ունեցող ճանապարհների նկատմամբ տեղական տրանսպորտի վարչութեանը, իսկ տեղական նշանակութեան ունեցող ճանապարհները նկատմամբ - համապատասխան գալատական գործադիր

կոմիտեները, միաժամանակ մշակելով ճանապարհային շինարարության առաջիկա տարվա ընդհանուր պլաններն ու նախահաշիվները:

2. Նախորդ հոգվածում հիշված մարմինները, նախ քան ճանապարհային շինարարության աշխատանքների տարեկան պլանների նախագծերն ու նախահաշիվները հանրապետական վերադաս մարմիններին ի հաստատութուն ներկայացնելը, համապատասխան գավառական կամ գավառակային գործկոմի առաջ ըստ պատկանելուն հարց են հարուցում «Գյուղական բնակչության ճանապարհային աշխատապարհակի կանոնադրության» 1 հոդ. 1 ծանոթությամբ նախատեսված վորոշումներ կայացնելու մասին:

3. Գավառական և գավառակային գործկոմների վորոշումների մեջ ցույց է տրվում թե առաջիկա բյուջետային տարում վնաս շրջանների կամ առանձին բնակավայրերի բնակչությունն է լենթարկվում ճանապարհային աշխատապարհակի, և վնաս ճանապարհների կամ վնաս ուղեմասերի վրա չե կիրարկվելու ճանապարհային աշխատապարհակի:

Բնակչությանը ճանապարհային աշխատապարհակի լենթարկելու հարցը համապատասխան գործկոմները պետք է վճռեն այս հրահանգի 1 հոդ. հիշված մարմիններից համապատասխան գիծում ստանալուց հետո 2 շաբաթվա ընթացքում:

ԾԱՆՈԹ.— Այս հոգվածով հիշված վորոշում-

ներով անհրաժեշտության դեպքում լուծվում է աշխատանքների կատարման վայրի և բնակելի վայրերի միջև ընկած առավելագույն տարածությունը ավելացնելու հարցը, վորը նախատեսված է ճանապարհային աշխատապարհակի կանոնադրության 7-րդ հոգվածով: Այս հարցի մասին գավառակային գործկոմների կայացրած վորոշումները հաստատում են գավառական գործադիր կոմիտեները:

4. Միութենական նշանակութուն ունեցող ճանապարհների և ճանապարհային կառուցվածքների նորոգության աշխատանքներին մասնակցելու համար բնակչությանը ճանապարհային աշխատապարհակի լենթարկելու հարցը քննության են առնում գավառական գործկոմները մինչև առաջիկա բյուջետային տարվա համար միութենական նշանակութուն ունեցող ճանապարհային շինարարության աշխատանքների տարեկան պլան կազմելը:—

ա) գավառական գործադիր կոմիտեի անմիջական նախաձեռնությամբ, բ) իշխանության տեղական ստորին մարմինների (գավառակային գործկոմների կամ գյուղխորհուրդների) միջնորդությամբ և գ) Տեղական Տրանսպորտի Հանրապետական Վարչության առաջարկությամբ:

Գավառական գործկոմների կողմից այս հարցի մասին կայացված վորոշումները պատճառաբանված զեկուցման հետ մի շաբաթվա ընթացքում ներկայացվում են Կենտրոնական Գործադիր կոմիտեի նախագահությանն ի հաստատութուն:

5. Ի քննութիւնն և ի հաստատութիւնն ներկայացված՝ ճանապարհային աշխատանքների տարեկան պլանների նախագծերում և նրանց հետ կապված նախահաշիվներում գյուղական բնակչութեան ճանապարհային աշխատապարհակը հաշիվ չե առնվում միայն այն դեպքում, չեթե բնակչութեանն այդ պարհակին չենթարկելու վորոշումը ձեվակերպված է վերը հիշված կարգով:

6. Բնութեան տարերային չերեվութեան բնակչութեան և շարժման ընդհատումի վտանգին չենթակա հանրապետական, տեղական, ինչպես նաև միութենական նշանակութիւնն ունեցող ճանապարհները նորոգելու համար բնակչութեանը ճանապարհային աշխատապարհակի չենթարկելու դեպքում պահանջվում է՝ միութենական և հանրապետական նշանակութիւնն ունեցող ճանապարհների նկատմամբ-գաղապական գործկոմիներին, իսկ տեղական նշանակութիւնն ունեցող ճանապարհների նկատմամբ-գաղապական կային գործկոմիներին վորոշումը: Այդպիսի վորոշումներ կայացնելու վերաբերյալ միջնորդութեանները հարուցում են տեղական ճանապարհային մարմինները, և լուծում են վերոհիշյալ գործադիր կոմիտեները շտապ կարգով:

ԾԱՆՈԹ. 1 - Բնակչութեան կողմից այս հոդվածի կարգով կատարված աշխատանքը հաշիվ չե առնվում ճանապարհային աշխատապարհակի վերաբերյալ կանոնադրութեան 6 հոդվածով նախատեսված առավելագույն թիվով բանվորական սրերի դիմաց: Այս նպատակով ճանապարհային

աշխատանքների տարեկան պլաններ կազմելիս բանվորական ուժի 70%ը նկատի չե առնվում բնութեան տարերային չերեվութեան բնակչութեան ճանապարհների չենթարկելիք վերանորոգութեան աշխատանքները կատարելու համար:

ԾԱՆՈԹ. 2 - ճանապարհային աշխատապարհակի կանոնադրութեան 8-րդ հոդվածի ուժը չի տարածվում այն դեպքերի վրա, չերը բնակչութեանը ճանապարհային աշխատապարհակի չենթարկվում բնութեան տարերային չերեվութեան բնակչութեան և շարժման ընդհատումի վտանգին չենթակա ճանապարհների նորոգութեան համար:

7. Տեղական նշանակութիւնն ունեցող ճանապարհային աշխատանքների տարեկան պլանը գաղապական գործադիր կոմիտեների կողմից հաստատվելուց հետո այդ պլանի համաձայն կատարվում է աշխատանքների կատարման սրացուցային բաշխում՝ ճանապարհային աշխատապարհակի կիրառմամբ, վորի մեջ նախատեսվում են ճանապարհային աշխատապարհակի կանոնադրութեան 11 հոդվածում հիշված բոլոր հարցերը, ինչպես նաև սահմանվում է յուրաքանչյուր ուղեմասի համար անհրաժեշտ բանող անառունների, սայլերի և ինվիտարի քանակը: Բաշխման այդ ցուցակի մասերը հաղորդվում են այն համապատասխան գաղապական գործկոմիներին, վորոնց վերաբերում են, անհրաժեշտ նախապատրաստական բոլոր գործողութեանները կատարելու համար:

Այդ պլանը կազմելիս նկատի չե առնվում

ճանապարհային աշխատապարհակի կանոնադրու-
թյան 8-րդ հոդվածով սահմանված կանոնը: Վե-
րոհիչյալ որացուցային բաշխումը պետք է հա-
մաձայնեցվի Տեղական Տրանսպորտի Հանրա-
պետական Վարչութչան հետ այն կարգով, վոր
սահմանված է Անդրկենսագործկոմի 1927 թ.
սեպտեմբերի 27-ի «Հաղորդակցութչան Ճանա-
պարհների կոմիսսարիատի կողմից ԱՍՖՆՀ խճու-
ղային և սալի ճանապարհների դրութչան և
պահպանութչան վրա բնդհանուր հսկողութչուն
իրագործելու կարգի կանոնադրութչամբ»:

ԾԱՆՈԹ. — Հանրապետական (պատշաճ գեղ-
քերում նաև միութենական) ճանապարհների
վրա կատարվելիք աշխատանքների և ճանապար-
հային աշխատանքների կիրառման որացուցային
բաշխման նախագիծը կաղմում է Տեղական
Տրանսպորտի Հանրապետական Վարչութչունը,
համաձայնեցնելով համապատասխան գավառա-
կան գործադիր կոմիտեի հետ, վորը և հաստա-
տում է այդ նախագիծը:

8. Հաստատված որացուցային բաշխման հա-
մաձայն գավառակային գործադիր կոմիտեները
իրենց կողմից սահմանված հերթով աշխատանքի
չեն ուղարկում ճանապարհային աշխատապար-
հակի չենթակա անձանց համապատասխան քա-
նակութչամբ սալերով և ինվենտարով՝ ըստ աշ-
խատանքի վարիչների կարգադրերի (наряд):

ԾԱՆՈԹ. — Գավառակային գործադիր կոմիտե-
ները համաձայն նրանց ուղարկված որա-
ցուցային բաշխման վորտում են, թե առան-
ձին գյուղերից վորը, վորքան բանվորական

ձևը, բանոց անասուն, սալ և ինվենտար
պետք է տա ճանապարհային աշխատապար-
հակի կարգով ճանապարհային մարմինների
տրամադրութչան տակ գնելու համար, իսկ ա-
ռանձին անտեսութչունների միջև այդ բաշ-
խումը կատարում են գյուղխորհուրդները՝
համաձայն չութաքանչյուր անտեսութչան
մեջ չեղած բանոց անասունների, սալերի
և ինվենտարի քանակութչան և նկատի
ունենալով առանձին անտեսութչունների
կարողութչան աստիճանը:

9. Ճանապարհային աշխատապարհակի չեն-
թակա չեն միայն այն անձինք, վորոնք մշտա-
պես ապրում են տվյալ վտրում կամ այդ
վայրի հետ մշտական կապ ունեն՝ այնտեղ գույք
կամ անտեսութչուն ունենալու հետևանքով:

10. Ճանապարհային աշխատապարհակի չեն
թակա չեն ա) հիվանդութչան կամ խեղանդա-
մութչան հետևանքով իրենց աշխատունակու-
թչունը բնդմիշտ կամ ժամանակավորապես կու-
ցրած անձինք և սահտարակ հիվանդները,
բ) կարմիր բանակի և կարմիր նավատորմի
մշտական ու վրվորական մասերում իսկա
կան զինվորական ծառայութչան մեջ գտնվող
անձինք, գ) պետական, հասարակական և կոո-
պերատիվ հիմնարկութչունների ու ձեռնար-
կութչունների մշտական ծառայողները, դ) պե-
տական, կոոպերատիվ և մասնավոր ձեռնար-
կութչունների բանվորները, ինչպես նաև տվյալ
վայրում սեփական անտեսութչուն չունեցող
բատրակները և ե) այն անձինք, վորոնք համա-

1003
14630



մատուցատեսիսան գավառակային գործադիր կոմիտեներին փորձառուների հիման վրա այլ հարգելի պատճառներով ազատված են այդ պարհակից:

11. Ճանապարհային աշխատապարհակի չենթարկված անձինք աշխատանքների ժամանակ պարենավորվում են իրենց հաշվով. նրանց խմելու ջուր մատակարարելու պարտականություն ընկնում է ճանապարհային աշխատանքները ղեկավարող մարմինների վրա:

12. Ճանապարհային աշխատապարհակի չենթարկված անձանց իրենց բնակավայրից 8 կիլոմետրից հեռու աշխատանքի ուղարկելու դեպքում նրանց գիշերելու շենք հատկացնելու ծախքերը հոգում են ճանապարհային աշխատանքներ ղեկավարող մարմինները. այդ ծախքերը նախատեսվում են համապատասխան նախահաշիվներով:

13. Յեթե ճանապարհային աշխատապարհակի չենթակա անձինք կամենում են ուղավել կանոնադրության 5-րդ հոդ. արվող իրավունքից և բնական պարհակը փոխարինել համապատասխան գրամական գումարով, պարտավոր են այդ մասին հայտնելու համապատասխան գավառակային գործադիր կոմիտեին նախորոք, այն ժամանակամիջոցներում, փորոնք սահմանվում են կանոնադրության 15-րդ հոդվածի 2 մասով նախատեսված տեղական կանոններով:

Գավառակային գործադիր կոմիտեն կարող է մերժել այդ փոխարինումը միայն այն դեպք

քերում, չեք պարզի, փոր ավյալ վայրում բավարար չափով բանփորական ուժ չկա:

14. Անձնական աշխատանքի և բնական պարհակի փոխարեն գրամական գումար վճարելու ժամանակամիջոցը սահմանում է գավառական գործադիր կոմիտեն, սակայն այն հաշվով, փորպեսզի այդ գումարները մուծվեն Ֆինժողկոմատի գրամարկդները վոչ ուշ քան մինչև աշխատապարհակի կիրառմամբ կատարվող աշխատանքների սկիզբը, այսինքն՝ մինչև հունիսի 20-ը:

15. Կանոնադրության 12 և 13 հոդվածների կարգով մուծվող գումարները հաշվվում են փորպես ավանդ համապատասխան գավառական գործադիր կոմիտեի անունով և ծախսվում են ճանապարհային շինարարության վրա: Առաջին հերթին այդ գումարները գործադրվում են բանփորական ուժ վարձելու համար, իսկ մնացորդները կարող են ծախսվել նաև այլ կարիքների վրա ճանապարհային շինարարության արտադրական հաստատված պլանների սահմաններում:

16. Այս հրահանգը ուժի մեջ է մտնում 1927 թ. հոկտեմբերի 1-ից և կիրարկվելու չեն ընթացիկ 1927—1928 գործառնական տարում բացի այն հոդվածներից, փորոնք վերաբերում են ճանապարհային աշխատանքների պլաններն ու նախահաշիվները միմյանց հետ համաձայնեցնելուն: Ընթացիկ տարում ճանապարհային աշխատապարհակը պետք է կիրարկվի այն շրջաններում, փորտեղ այդ նախատեսմամբ է 1927—

1928 թ. տարեկան պլանների նախագծերով և նախաճաշիվներով: Բնակչութիւնը այդ շրջաններում ճանապարհային աշխատապարհակի չենթարկելը պետք է ձևակերպված լինի ճանապարհային աշխատապարհակի գործող կանոնադրութիւն կարգով, տեղական գործկոմիտեի կողմից, մինչև 1928 թ. հունիսի 20-ը՝ համաձայնեցնելով ՀՍՄՀ Տեղական Տրանսպորտի վարչութիւն հետ:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահի Տեղակալ՝ Հ. ԱՉԱՏՅԱՆ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

Յերևան

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԺԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐԿԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

(Մասչելի պարզաբանութիւն)

Մեր ճանապարհները վատ դրութիւն մեջ են. խորաուրուտ, ծուռ ու քարքարոտ, այնքան վատ, վոր ամեն անգամ անցնելուց անիծում ենք այդ ճանապարհները և մտածում. չէրբ մենք եւ կունենանք ուղիղ, լայն և կանոնավոր ճանապարհներ, վորոնցով անարգել ու ապահով կանցնեն կ' մարդը, կ' սայլը, կ' մեքենան, կ' կենդանին:

Շատ անգամ ասված է, ընդունված ճշմարտութիւն է. այն չերկիրը, վոր զուրկ է լավ ճանապարհներից, այն ժողովուրդը, վոր չի մըտածում իր ճանապարհների կարգավորման, շինարարութիւն մասին, այդ չերկիրը, այդ ժողովուրդը ամենազժբախտն է, ամենահետամնացը վնչ միայն աչտր, այլ և հետագայում, չեթե նույն դրութիւնը շարունակե գոյութիւնն ունենայ: Յե՛վ խկապես, ինչպէս կարող է հեռավոր գանգեղութիւն, ապարանցին իրեն ապահով բղ-

գալ, ինչպես կարող է գլուղացին առաջգիմել թե անտեսապես և թե կուլտուրապես, չեթե ճանապարհների բացակայութեան պատճառով նա կտրված է կենտրոններից և ժամանակին չի կարողանում ստանալ անհրաժեշտ գլուղատնտեսական գործիքներ, մեքենաներ, գործարանային ապրանքներ, լրագրեր, ամսագրեր, չեթե նա հնարավորութեամբ չունի իր սեփական արտադրանքները դուրս հանել շուկա վաճառելու: Աշխատավոր գլուղացիութեան և Սորհրդային իշխանութեանը պետք է ուշադրութեամբ դարձնեն այս չեղելի վիճակը և միջոցներ ձեռք առնեն չեղելու և խճուղիներ, սայլի և տեղական նշանակութեամբ ունեցող ճանապարհներ շինելու, ալգիսիները վերանորոգելու, լայնացնելու, հարթելու և այլն:

Կան մարդիկ, վորոնք հեռու չեն նայում և անհոգ ասում են. դե ունենք իշխանութեան, թող նա չեղ մտածի ճանապարհների շինարարութեան մասին, թող նա ճարտարապետներ, տեխնիկներ ուղարկի և կարգի բերի խճուղիները, սայլի ճանապարհները: Ասում են, բայց չեն մտածում, վոր Սորհրդային իշխանութեանը մեն մենակ ներկա պայմաններում այդ բոլորը կատարել չի կարող: Անհրաժեշտ է, վոր այդ աշխատանքների մեջ յեռանդուն կերպով մասնակցի ամբողջ գլուղացիութեան և բնագույն ճանապարհների շինարարութեան:

Իր ժամանակին Անդրկովկասյան ՍՍՖՅ

Կենտրոնական Գործադիր Կոմիտեն շատ մանրամասն կերպով քննութեան է առել այս հարցը և 1927 թ. սեպտեմբերի 5 ին հրատարակել է հասկապես «Գլուղական բնակչութեան ճանապարհային աշխատադրակի» կանոնադրութեան, վորի կարեւոր կողմերի վրա ցանկալի չե կանդ առնել, վորպեսզի չուրաքանչյուր գլուղացի, կարգալով այդ գրքուկը, հասկանա իր անելիքները ճանապարհների շինարարութեան գործում:

ԻՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ Ե ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐՀԱԿԸ

Ճանապարհային աշխատադրակը մի հիմնական և կարեւոր նպատակ է հետապնդում՝ շինել, վերանորոգել և կանոնավոր վիճակի մեջ պահել Հանրապետական և տեղական նշանակութեամբ ունեցող խճուղիները, սայլի և այլ ճանապարհները: Համամիութենական նշանակութեամբ ունեցող նոր խճուղիների կառուցումը ճանապարհային աշխատադրակի կարգով չի կատարվում: Պարհակի կարգով կատարվում են այն ճանապարհների միջին ընթացիկ վերանորոգումները, այն էլ անչափսի գեպքերում, չեբը նրանք վրասովել են տարրերային աղետներից: Յերեվակայք, վոր հեղեղը փչացնում է մի վորյեվե Համամիութենական նշանակութեամբ ունեցող ճանապարհ և այնպիսի դրութեամբ է ստեղծվում, վոր ամբողջ չեթեվեկութեանը կանդ է առ-

նում: Ի հարկե, նման գեպրերում իշխանութեան վորոշմամբ բնակչութունը կարող ե ճանապարհային աշխատապարհակի կանչվել աչգ ճանապարհը կարգի բերելու համար:

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐՀԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գյուղացիներին և չուքաքանչյուք քաղաքացուն կարող ե հետաքրքրել աչն հարցը թե ո՞վ իրավունք ունի ճանապարհային աշխատապարհակ հայտարարելու նախաձեռնութունն ստանձնել, կամ ուրիշ խոսքով ասած, ո՞վ կարող ե աչգ հարցը բարձրացնել: Որենքը բացատրում ե, վոր նման նախաձեռնութունը կարող են իրենց վրա վերցնել թե գյուղական խորհուրդները, թե գավառային, թե գավառակային գործկոմները, ինչպես նաեւ Տեղական Տրանսպորտի Վարչութունը հանրապետական և Համամիութենական ճանապարհների վերաբերյալ: Սա, իհարկե, գեո չի նշանակում, վոր ամեն մի քաղաքացի, հասարակական կազմակերպութուն իրավունք չունի նման հարցեր բարձրացնել: Ամեն մեկը կարող ե համագումարներում, ժողովներում, խորհրդակցութուններում ճանապարհների շինարարութեան վերաբերյալ հարցերը քննելիս առաջագրել ճանապարհային աշխատապարհակի հայտարարման խնդիրը և միջնորդել համապատասխան խորհրդի, գործկոմի առաջ, վորպեսզի վերջիններիս մտածեն աչգ ուղղութեամբ և համապատասխան ընթացք տան շոշափված հարցերին:

ՎՈՐ ՄԱՐՄԻՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐՀԱԿ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ

Յեթե գյուղական խորհրդին կամ հասարակական կազմակերպութուններին իրավունք ե վերապահված ճանապարհային աշխատապարհակի հարցը բարձրացնել, դա, ի հարկե, գեո չի նշանակում, վոր գյուղական խորհուրդն իրավունք ունի ինքն ել աչգ հարցը վերջնականապես լուծելու և անմիջապես գործադրելու կշանքում: Յեթե կառուցվող կամ վերանորոգվող խճուղիները, սաչի կամ գյուղական պետքերին ծառայող ճանապարհները ունեն հանրապետական ու տեղական նշանակութուն, աչն ժամանակ բնակչութունը ճանապարհային աշխատապարհակին յենթարկելու վորոշումները կաշացնում են գավառային կամ գավառակային գործադիր կոմիտեներին պլենումները, իսկ չեթե վորանորոգվող ճանապարհները համամիութենական նշանակութուն ունեն, վորոշումները կաշացնում են գավառային գործկոմների պլենումները, սակաչն աչգ վորոշումները անպատճառ պետք ե հաստատվեն ՀՄՍՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի կողմից, վորից հետո միաչն կարելի չե պարհակի վերաբերյալ հանած վորոշումը գործադրել կշանքում: Աչ ուղղութեամբ հանած վորոշումները Գավառային գործկոմները վոչ ուշ մի շաբթվա ընթացքում պատճառարանված գեկուցումով ուղարկում են Կենտրոնական կոմիտեի և միջնորդում հաստատելու:

Այգպիսով, տեսնում ենք, վոր տեղական գործկուսները ճանապարհային աշխատապարհակ հաշտարարելու ասպարիզում ունեն լաջն իրափունքները և նրանց ե վերապահված ճանապարհային շինարարութեան հիմնական աշխատանքները:

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՏԱՐՎԵՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ

Ամեն մի ասպարիզում գրական արդյունքներ կարելի չե ստանալ միայն այն ժամանակ, չեթե աշխատանքները կազմակերպվում ու տարվում են նախապես վորոշված ու հաստատված ծրագրով և նախահաշիվով: Խճուղի, սաջի կամ միջոցառման ճանապարհ կառուցելը հեշտ և աժան բան չե, նա՛ մի տարվա, չերկու տարվա համար չե, այլ տասնչակ տարիների. նրա նշանակութունը լառորը ե, այդ ճանապարհը գափառի բնակչութեան կյանքի մեջ կարեվոր դեր ունի և, չեթե այդ այդպես ե, ապա չուրաքանչյուրը պիտի դիտակցի ու գգա, վոր այդ կարեվոր կառուցումները այնպես պետք ե տարվեն, վոր մի տարուց կամ մի ամսից հետո մենք նորից կանգնած չլինենք նույն քարուքանդ ճանապարհի կամ, ինչպես ասում են, նույն կտարած տաշաի առաջ:

Տեղական նշանակութուն ունեցող ճանապարհների կառուցման, վերանորոգման և կանոնավոր վիճակում պահելու նախագծերը և նախահաշիվային լենթագրութունները մշակում են գափառային գործադիր կոմիտեներն իրենց կից

«տեղական նշանակութուն ունեցող ճանապարհների վրա հսկող լեռչակների» միջոցով, իսկ հանրապետական նշանակութուն ունեցող ճանապարհների նախագծերն ու նախահաշիվներն կազմում ե ՀՍԽՀ Տեղական Տրանսպորտի Վարչութունը: Այդ նախահաշիվները համապատասխան կարգով հաստատելուց հետո տեղական նշանակութուն ունեցող ճանապարհների նկատմամբ, գափառային գործադիր կոմիտեները մշակում են որացուցցային ցուցակներ, համաձայնեցնելով հանրապետական Տեղական Տրանսպորտի Վարչութեան հետ, իսկ հանրապետական նշանակութուն ունեցող ճանապարհների նկատմամբ որացուցցային ցուցակ կազմում ե հանրապետութեան Տեղական Տրանսպորտի Վարչութունը: Որացուցցային ցուցակների մեջ վորոշակի ու պարզ պետք ե ասված լինի — այս կամ այն ուղղեմասերի կցումը վորոշ բնակելի կետերին, պարճակի լենթակա անձանց պահանջվող քանակը, բանվորական աշխատաշափերն ու աշխատանքի կատարման ժամանակը: Այդ ցուցակների հիման վրա տեղական մարմինները անցնում են աշխատանքների: Բերենք մի որինակ: Յենթագրենք, Եջմիածնի Գավգործկումը վորոշում ե գափառի համար տեղական նշանակութուն ունեցող մի ճանապարհ կառուցել: Նախ՝ նա կազմում ե նախագիծ, այսինքն կառուցվող ճանապարհի պլանը, չերկորդ՝ նա կազմում ե նախահաշիվը, այսինքն վորոշում ու ձևակերպում ե այն բոլոր ծախքերը, վոր

անհրաժեշտ են կառուցման աշխատանքների համար և այս աչդ նախագծի և նախահաշվի վերաբերյալ ստանում համապատասխան մարմինների հաստատութունը: Հաստատվելուց հետո գավառային գործկոմը կազմում է որացուցցային ցուցակ, աչն է՝ վորոշում է. չէրբ սկսել աշխատանքները և չէրբ աչդպիսին ավարտել, պահանջվող բանվորների, սալների, գործիքների և այլ անհրաժեշտ պարագաների քանակը և այլ մանրամասնութուններ: Աչդ ցուցակը նա ուղարկում է գավառակաչին գործկոմին: Վերջինս իր ձեռքի տակ գտնվող գյուղերի բնակչութւան և գուլքերի ցուցակների հիման վրա վորոշում է, թե աչսինչ գյուղը պետք է աչսքան բանվոր տա, ինչպես նաև վորոշում է չուրաքանչուր գյուղից պահանջվելիք սալների, լծկան անասունների, գործիքների քանակը և աչդ մասին հաչտնում է գյուղական խորհրդին:

Գյուղական խորհուրդը իր ձեռքի տակ մինչ աչդ պետք է ունենա արդեն աշխատապարհակի չենթակա գյուղացիների ցուցակը, նրանց լծկան անասունների և սալների քանակը, վորոնց հիման վրա և վորոշում է ու կարգադրում, թե աչսինչ որը, աչսինչ գյուղացիները իրենց սալերով, գործիքներով, լծկան անասուններով պետք է դուրս գան աշխատելու ԵՂմիածնի գավառում կառուցվող աչսինչ ճանապարհի վրա: Սալեր, բեռնակիր անասուններ կամ փոխադրական այլ միջոցներ, ինչպես նաև գործիքներ պահանջելիս

գյուղական խորհուրդը հաշվի պետք է առնի անասնութւանների ունակութւանը և աչդպիսի գիծ տանի, վոր թույլ անտեսութւանները չը տուժեն: Գյուղի բնակչութւանը աշխատապարհակի չենթարկելու վորոշումները պետք է հաչտարարվեն գյուղացիութւան վոչ ուչ քան չերկու շաբաթ առաչ: Դա կարեոր է, վորպեսզի չուրաքանչուրը մինչ աչդ կարգավորի իր գործերը և պատրաստ լինի մասնակցելու աշխատանքներին:

ՈՎՔԵՐ ԵՆ ԿՈԶՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՊԱՐՀԱԿԻ

Որենքում տաված է, վոր ճանապարհաչին աշխատապարհակի չենթակա չեն տվչալ վաչրում մշտապես ապրող կամ աչդ վաչրի հեա տնտեսական կապ ունեցող բոլոր 18—50 տարեկան ազամարդիկ. կանաչք բոլորովին ազատվում են աչդ պարտականութւանից: Աչդ քաղաքացիները ցուցակները գյուղական խորհուրդները ժամանակին պետք է կազմեն և պատրաստ ունենան գյուղխորհրդի գրասենյակում, վորպեսզի ճանապարհաչին աշխատապարհակը հաչտարարելիս հնարավոր լինի անմիջապես անցնել աշխատանքներին:

ՈՎՔԵՐ ԵՆ ԱԶԱՏՎՈՒՄ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐՀԱԿԻՑ

Որենքը նախատեսել է մի շարք դեպքեր, չերբ գյուղացիներին կարելի չե ազատել ճանապարհաչին աշխատապարհակից: Վհրոնք են գրոնք. նախ՝ ազատվում են նրանք, վորոնք հի-

վանդ են կամ հիվանդութեան ու խեղանդամութեան հետեանքով ժամանակավորապես կամ ընդմիջտ կորցրել են իրենց աշխատունակութիւնը: Քյուղացին կարող է հիվանդանալ ու պառկել կամ հիվանդութեան հետեանքով նրա փոքր ձեռք ժամանակավորապես թուլանալ. պարզ է, այդպիսին պետք է ազատփի պարճակից: Յերկրորդ՝ աշխատապարճակից ազատփում են բոլոր նրանք, փորոնք մշտական և փոփոխական գինմատերում իսկական զինվորական ծառայութեան մեջ են գտնվում, ազատփում են նաև պետական, կոոպերատիվ և մասնավոր ձեռնարկութեաների բանվորները, ավչալ վալրում սեփական անտեսութիւն չունեցող բատրակները և այն բոլոր անձինք, վորոնց գավառակային գործկոմը այս կամ այն հարգելի պատճառով անհրաժեշտ կը գտնի ազատելու այդ պարտականութիւնից: Ճանապարհային աշխատապարճակից ազատփողների ցուցակները կազմում է գյուղխորհուրդը և ներկայացնում գավառակային գործկոմին՝ ի հաստատութիւն:

ՃԱՆԱՊԱՐԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐԶԱԿԸ ՊԻՏԻ ՀԱՍԿԱՆԱԼ ԲԱՅԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ՆԱԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՅՅԱՆ ՍԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

Ամեն մի գյուղացի, չեթե նա կանչված է աշխատապարճակի, առաջին հերթին արամազրում է իր բանվորական ույժը: Սակայն, բացի

անձնական աշխատանքից, նույն այդ գյուղացին, չեթե ունի սայր, բեռնակիր անասուններ, գործիքներ (քլունդ, բահ և այլն), նա պարտավոր է իր հետ բերել նաև սայլը, փոխադրական այլ միջոցները և այլն, չեթե այդ պահանջվի իշխանութեան կողմից: Այստեղ կարող են հարց տալ. չեթե անտեսութեան մեջ չկա այնպիսի անձ, վոր չենթարկվի աշխատապարճակի, բայց այդ անտեսութիւնը ունի լծկան անասուններ, սայլեր և այլն, իրավունք ունի արգիւյր գյուղական խորհուրդը նրանից պահանջել, վորպեսզի նա արամազրի իր սայլը, լծկան անասունները և այլն: Այո, կարող է, չեթե միայն անտեսութիւնն ուժեղ է և չեթե գյուղխորհուրդը այդ փոխադրական միջոցները կառավարելու համար կարամազրի ուրիշ գյուղացիներ: Նման դեպքերում աշխատանքի ղեկավարները և գյուղական խորհուրդը պետք է հսկեն, վոր այդ անտեսութիւններից վերցրած անասունների, սայլերի կամ գործիքների հետ վարվեն խնամքով:

Յուրաքանչուր գյուղացի իր աշխատանքի ժամանակաշրջանում պարտավոր է հոգալ իր պարենը և բեռնակիր անասունների կերը: Առավոտյան աշխատանքի գնալիս, նա պետք է վերցնի իր հետ մի որվա հացի պաշտը, չեթե չերկույան է վերադառնալու տուն, նաև՝ անասունների համար կեր, չերը լծկան անասուններ և տանում իր հետ: Ինչ վերաբերում է խմելու ջրին, վերջինս աշխատավորներին պարտավոր է

տալ աչն մարմինը, վորը ձեռնարկել և աշխատանքները՝ գավառակաչին կամ գավառաչին գործկոմները և այլն:

ՃԱՆԱՊԱՐԶԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՊԱՐԶԱԿ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՅԵՎ ՈՐԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Յուրաքանչյուր գյուղացի պետք է խմանա, վոր մի տարվա ընթացքում իր վրա ընկնում է պարտականություն ճանապարհաչին աշխատապարհակի մեջ մասնակցելու վոչ ավել քան 7 որ: Այդ 7 որվա աշխատանքը ամեն մեկը կարող է կատարել անընդհատ կամ թե չե մաս-մաս: Յեթե աշխատանքները շարունակվելու չեն մի ամիս, գյուղացին կարող է մի շաբաթ շարունակ աշխատել և վերադառնալ տուն, իսկ չեթե մի շաբաթ բացակայելով կարող է նրա անտեսությունը խիստ տուժել, գյուղխորհրդի թուլությունով և համապատասխան ցուցակների հիման վրա նա կարող է առաջին շաբթում մասնակցել աշխատանքներին չերկու որ, չերկրորդ շաբթին՝ 3 որ, և չերրորդ կամ չորրորդ շաբթին — 3 որ: Այսպիսի ձևը, իհարկե, թուլադրելի չե աչն ղեպքերում, չեթե աշխատանքները շտապողական չեն և չեթե այդպիսի մասնակցությունից իրոր գյուղացու անտեսությունը կշահի: Յեթե տարվա ընթացքում գյուղացին արդեն չերկու որ աշխատել է ուրիշ ճանապարհի վրա աշխատապարհակի կարգով, նույն տարում մի ուրիշ ճանապարհի վրա աշխատելուց սահմանված 7

որից պետք է դուրս գալ չերկու որը: Այս բոլոր հաշիվները գյուղական խորհուրդը և գավառակաչին գործկոմները պետք է ճշտութեամբ պահեն, վորպեսզի առիթ չտան գյուղացիներին դժգոհելու և որենքից դուրս նրանց աշխատեցնելու:

Նկատի առնելով գյուղացու անտեսությունը շահը, որենքը արգելում է գյուղատնտեսական չեռուն աշխատանքների ժամանակ ազգաբնակչությանն չենթարկել աշխատապարհակի: Յեվ խկապես, ինչ կլինի գյուղացու գրությունը, չեթե վաղը ցորենի կամ բամբակի բերքի ժամանակ նրան ասեն. գնա և աշխատիր այսինչ ճանապարհի վրա: Արտը կմնա անտեր, իսկ ցորենը միկների և թռչունների կերակուր կգառնա: Սակաչն, չեթե նույն այդ ժամանակաշրջանում հեղեղը չեկավ և փշացրեց խճուղին, վորի հետեվանքով կապը կտրվեց շրջակայքի հետ, պարզ է, այդ ղեպքերում հնարավոր է գյուղացիներին դուրս բերել աշխատանքի: Նման ղեպքերում գյուղխորհուրդը գյուղացիներին աշխատապարհակի ուղարկելիս առաջին հերթին պետք է այնպիսիներին ուղարկի, վորոնք տանը ունեն սգնող ձեռք:

Աշխատապարհակը կատարվում է գործաբանակի սկզբունքով: Սա նշանակում է, վոր մի գյուղի ճանապարհաչին աշխատապարհակի չենթակա գյուղացիների վրա կարող են զնել պարտականություն կառուցվող խճուղու կամ այլ ճա-

նապարհի աշխնչ տարածութիւնը 4, 5 կամ 7 որում ավարտել: Աշխատանքի այս չեղանակը ունի իր դրական կողմը, այն է, վոր ամեն մի գյուղացի շահագրգռված կլինի արագ, կանոնավոր աշխատել, շուտ վերջացնել աշխատանքը և վերադառնալ գյուղը: Յեթե կարգադրված է, վոր այսինչ տարածութիւնը պետք է ավարտվի յոթ որում, իսկ գյուղացիները ավարտել են 5 որում, նշանակում է չերկու որ գյուղացիները շահեցին շնորհիվ իրենց աշխատանքի արտադրողականութիւնը:

Ճանապարհային աշխատապարհակը չի թուշլատրվում կիրարկել աշխատանքների կատարման վաղրից ութ կիլոմետր ավելի հեռու ապրող բնակչութիւն նկատմամբ, միայն բացառիկ դեպքերում, գալառային գործադիր կոմիտեի վորոշումներով այդ տարածութիւնը կարող է ավելացվել մինչև 15 կիլոմետրի, են ել այն պայմանով, վորպեսզի բանվորների համար աշխատանքների վաչրում գիշերելու հարմարութիւններ ստեղծեն:

ԱՄԵՆ ՄԻ ԳՅՈՒՂԱՑԻ ՊԵՏՔ Ե ԺԱՍԱՆԱԿԻՆ ԳԱ
ԱՇԽԱՏԱՆՔԻ

Ամեն մի գյուղացի պետք է պարտաճանաչ գտնվի և ժամանակին դուրս գա աշխատանքներին: Դա պահանջում է թե իր և թե պետութիւն շահերը: Նրանք, վորոնք կխուսափեն աշխատանքներից, շուտ ու մուտ կգան գյուղի փո-

գոցներում և չեն գնա կատարելու իրենց վրա դրված պարտականութիւնը, պատասխանատվութիւն կկանչվեն: Նման անպարտաճանաչ գյուղացիների ցուցակը կազմում են գյուղխորհուրդը և աշխատանքի հսկիչները և ապա ուղարկում են գալառակային գործկոմիտե: Գալառակային գործկոմը յուրաքանչյուր չաշխատած որի համար նշանակում է տուգանք: Յեթե բանվորական ուժը վարձելու գինը ավել շրջանում մեկ ուրբի յե և գյուղացին չի չեկել աշխատանքի չերկու որ, գործկոմը իրավունք ունի տուգանելու նրան չերկու ուրբով և պահանջելու, վոր նա գնա և իր սլարհակը կատարի:

Ալինեն գյուղում նաև այնպիսի մարզիկ, վորոնք կհրաժարվեն մասնակցելու ճանապարհային աշխատապարհակին: Նմաններին որենքը պատասխանատվութիւն է չենթարկում քրեական որենսգրքի հոդ. 87-ի հիման վրա, ըստ վորի սոցիալական պաշտպանութիւն միջոց նախատեսված է՝ առաջին անգամ վարչական պատիժ, չերկրորդ անգամ հարկադիր աշխատանք՝ մինչև վեց ամիս ժամանակով, կամ տուգանք նույն պարհակների և աշխատանքների չափով:

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՓՈԽԱՐԻՆԵԼ
ԴՐԱՄՈՎ

Կլինեն դեպքեր, չերը գյուղացին, ունենալով այս կամ այն կարևոր աշխատանքները, նրա պատակահարմար կգտնի աշխատանքներին անձամբ

չմասնակցելու և այդպիսին փոխարինելու գրամականով: Բերենք մի որինակ. գյուղացին սկսել է մի տան կառուցում, վարձել է վարպետներ, բանվորներ, կրել է քար և մտադրվել է 15 օրում վերջացնել աշխատանքները: Հենց այդ ժամանակամիջոցում հայտարարվում է աշխատապարհակ: Գյուղացին մտածմունքի մեջ է ընկնում, ի՞նչ անել, յեթե անձամբ գնա՝ աշխատանքները կանգ կառնեն և հնարավորություն չի ունենա ժամանակին ավարտել, իսկ ընտանիքը գրտումն է: Մտածում է և վորոշում չգնալ և փոխարեն սալ գրամ: Այժմ հարց է առաջ գալիս. պարհակը գրամականով փոխարինելիս, ի՞նչպես պետք է վորոշել վճարելիք գրամի գումարը: Ճանապարհային պարհակը գրամականով փոխարինելու չափերը վորոշում են գավգործկումները, հաշվի առնելով սվյալ վայրում բանվորական ուժ և լծկան անասուններ վարձելու գները: Յեթե բանվորական ուժ վարձելու գինը սվյալ վայրում մեկ ուրբի չե, ապա գյուղացին չոթ որ աշխատապարհակի փոխարեն կվճարի 7 ուրբի: Յեթե նույն գյուղացին իր հետ պետք է գուրս բերե աշխատանքի չեղիու որվա ընթացքում նաև լծկան անասունները, իսկ լծկան անասուն վարձելու գինը մեկ ուրբի չե, նա կը վճարի գալձյալ չեղիու ուրբի, ընդամենը ինն ուրբի:

Պարհակը գրամական տուրքով փոխարինելու հարցը վճում է գավառակային գործկումը,

վորին և պետք է դիմի գյուղացին: Դրամների վճարման ժամկետը սահմանում է գավգործկումը: Պանձված գումարները գավգործկումի կողմից ծախսվում են ճանապարհային շինարարության վրա, առաջին հերթին բանվորական ուժ վարձելու վրա: Պարհակը գրամականով փոխարինելու դիմումները գավառակային գործկումը իրավունք ունի մերժելու միայն այն դեպքում, յեթե սրվյալ վայրում ազատ բանվորական ձեռքեր չկան:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԼԱՅՆ ԱԳԻՏԱՑԻԱ

Յերբեմն գրագետ մարդը ծանոթ չի լինում մեր որենքներին, ուր մնաց թե որենքներին ծանոթ լինի անգրագետ գյուղացին: Ի՞նչ նպատակով է սահմանվում ճանապարհակը, ի՞նչ ոգուտներ ունի գրանից հենց ինքը գյուղը, ի՞նչ իրավունքներ ու պարտականություններ ունի այդ գործում յուրաքանչյուրը, ո՞վ է պարտավոր մասնակցել պարհակին, ո՞վ է ազատվում նրանից և այլն. այս հարցերը բազմակողմանի կերպով պետք է բացատրել լայն գյուղական ռասսաներին: Այս պարտականությունն իր վրա պետք է վերցնի գյուղխորհուրդը, նրա շին — սանիտարական սեկցիան, գավառակային ու գավառային գործկումները, հասարակական կազմակերպությունները, մեր մասնագետները: Այն գյուղացին, վորը գիտակցարար է գնում իր ճանապարհային աշխատապարհակը կատարելու, նա վոչ

միայն ամուր կկաշի մեր շինարարութեան, այլև
որինալ կղանա մշտաների համար:

Ճանապարհային աշխատապարճակի որենքի
պարզաբանումն ու մասսալականացումը չուրա-
քանչյուր տեղական աշխատակցի պարտակա-
նությունն է:

Հայկեհնործկոսի

Կազմբաժնի վարիչի սեղակալ՝

Խ. ԳՍՆԻՆԵՆՅԱՆ



« Ազգային գրադարան



NL0221261

37. 178

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՊ.